ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 171** քաղ. Մոսկվա

Մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 120-րդ հոդվածի 3-րդ եւ 10-րդ կետերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

մինչեւ ապրանքերի հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի ձեւը.

մինչեւ ապրանքերի հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը լրացնելու կարգը.

մինչեւ ապրանքերի հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու կամ գրանցումը մերժելու կարգը:

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ն ապահովել մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի կառուցվածքն ու ձեւաչափը նախատեսող տեղեկատվական համակարգերի լրամշակումը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշմանը համապատասխան:

3. Սահմանել, որ մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը կիրառվում է մինչեւ ապրանքերի հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի միայն թղթային կրիչով փաստաթղթի ձեւը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 171 որոշմամբ

ՁԵՎ

մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն
ապրանքների բացթողման մասին դիմումի

<table>
<tr><td colspan="8">ԴԻՄՈՒՄ
մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին</td></tr>
<tr><td colspan="2">1. Դիմումը</td><td colspan="6">Ա</td></tr>
<tr><td colspan="5" rowspan="2">2. Դիմումատուն</td><td colspan="2">3. Թերթերի քանակը</td><td colspan="2">4. Ընթացակարգը</td></tr>
<tr><td colspan="2">5. Ապրանքներ՝ ընդամենը</td><td colspan="2">6. Ապրանքների կատեգորիան</td></tr>
<tr><td>a</td><td></td><td>b</td><td colspan="3">պարտավորվում է ներկայացնել ԱՀ մինչեւ _____</td><td colspan="2"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="4">7. Ուղարկողը</td><td colspan="4">8. Ստացողը</td></tr>
<tr><td colspan="2">9. Ուղարկող երկիրը</td><td colspan="3">10. Նշանակման երկիրը</td><td colspan="3">11. Նախորդող փաստաթուղթը</td></tr>
<tr><td colspan="2">12. Ընդհանուր համաքաշը (բրուտտո) (կգ)</td><td colspan="3">13. Ընդհանուր արժեքը</td><td colspan="3">14. Արժույթը</td></tr>
<tr><td colspan="4">15. Վճարելու պարտավորության կատարման ապահովումը</td><td colspan="4">16. Ապրանքների գտնվելու վայրը</td></tr>
<tr><td colspan="4">17. Դիմումը լրացրած անձի վերաբերյալ տեղեկությունները</td><td colspan="4"></td></tr>
</table>

18. Ապրանքների վերաբերյալ տեղեկությունները							
Ապրանքի համարը	Անվանումը, նկարագիրը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Լրացուցիչ միավորների քանակը		Համաքաշը (բրուտտո)	Արժեքը	Ծագման երկիրը
			քանակը	լրացուցիչ միավորները			
1	2	3	4	5	6	7	8

19. Փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները						
Համարը՝ h/h	Ծածկագիրը	Հատկանիշը	Անվանումը	Ամսաթիվը	Համարը	Ապրանքի համարը
1	2	3	4	5	6	7

C	D

Ծանոթագրություն: Դիմումի սույն ձեւը կիրառվում է թղթային կրիչով ներկայացվող փաստաթղթերի համար:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 171 որոշմամբ

ԿԱՐԳ

մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը լրացնելու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 120-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, եւ դրանով սահմանվում են էլեկտրոնային փաստաթղթի եւ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը լրացնելու կանոնները (այսուհետ համապատասխանաբար՝ ԱՀ, դիմում):

2. Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումը լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող կառուցվածքին համապատասխան:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 171 որոշմամբ հաստատված ձեւով:

3. Մեկ դիմումի մեջ ենթակա են նշման մեկ ապրանքային խմբաքանակի մեջ ներառված այնպիսի ապրանքների մասին տեղեկություններ, որոնք ձեւակերպվում են միեւնույն մաքսային ընթացակարգով:

Սույն կարգի նպատակներով մեկ ապրանքային խմբաքանակ ասելով՝ հասկանում ենք Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքով միեւնույն ուղարկողից միեւնույն ստացողի հասցեին Միության մաքսային սահմանով արտաքին տնտեսական գործարքի կատարումը հաստատող մեկ փաստաթղթով (կամ վերամշակումից ստացվելիք արդյունքների մաքսային հայտարարագրման ժամանակ՝ ապրանքների վերամշակման պայմանների մասին մեկ փաստաթղթով) կամ միակողմանի արտաքին տնտեսական գործարքով կամ առանց որեւէ գործարքի պարտավորությունների կատարման շրջանակներում տեղափոխվող ապրանքներ, որոնք գտնվում են մաքսային հսկողության միեւնույն գոտում:

Մեկ ապրանքային խմբաքանակի մեջ ներառված ապրանքների մասին տեղեկությունները կարող են նշվել նույն մաքսային մարմին ներկայացվող մի քանի դիմումների մեջ՝ բացառությամբ այն դեպքի, երբ Մեկնաբանման 2ա հիմնական կանոնին համապատասխան՝ մեկ ապրանքային խմբաքանակի մեջ ներառված ապրանքները դիտարկվում են որպես չհավաքված կամ կազմատված ձեւով ներկայացված ապրանքի բաղադրամաս եւ դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ) միասնական ապրանքային անվանացանկի՝ կոմպլեկտային կամ ավարտուն ապրանքին համապատասխանող դիրքում:

Մեկ դիմումի մեջ կարող են նշվել ապրանքների կատեգորիաների դասակարգչին համապատասխան ապրանքների մեկ կատեգորիայի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են տրամադրվել ապրանքների բացթողման առնչությամբ՝ մինչեւ ԱՀ ներկայացնելը:

Մեկ ապրանքային խմբաքանակի մեջ նախկինում տարբեր մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքների առկայության դեպքում այդպիսի ապրանքների վերաբերյալ տեղեկությունները նշվում են տարբեր դիմումների մեջ:

4. Մեկ դիմումի մեջ կարող են նշվել ոչ ավելի, քան 999 ապրանքների մասին տեղեկություններ:

5. Արժույթի վերաբերյալ դիմում լրացնելու դեպքում այդպիսի դիմումը ներկայացվում է արժույթի յուրաքանչյուր տեսակի համար առանձին:

6. Դիմումը լրացնելիս կիրառվում են Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկատվության միասնական համակարգի ռեսուրսների կազմի մեջ մտնող տեղեկատուներն ու դասակարգիչները, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը համապատասխան ձեւավորվող եւ կիրառման ենթակա՝ մաքսային նպատակներով օգտագործվող տեղեկատուներն ու դասակարգիչները:

7. Սույն կարգի նպատակներով «վանդակ» ասելով՝ հասկանում ենք էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի կառուցվածքի վավերապայմանը (վավերապայմանները) կամ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի ձեւի կառուցվածքային միավորը, որը կարող է ներառել ենթաբաժիններ, այունակներ, տարրեր: Սույն կարգին համապատասխան՝ մեկ վանդակում նշվում են ըստ մեկ հատկանիշի միավորված տեղեկությունները:

8. Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումը կարող է պարունակել դիմումն ավտոմատացված կերպով մշակելու համար անհրաժեշտ տեխնիկական բնույթի տեղեկություններ: Այդպիսի տեղեկությունները տեղեկատվական համակարգի կողմից ձեւավորվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի կառուցվածքով որոշվող կազմին համապատասխան:

Տեխնիկական բնույթի տեղեկությունները չեն արտացոլվում էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ներկայացվող դիմումի թղթային պատճենը տպելիս:

9. Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացվում է A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա՝ 2 օրինակից, որոնցից մեկը նախատեսված է այն մաքսային մարմնի համար, որին ներկայացվում է դիմումը, իսկ մյուսը՝ դիմում ներկայացնողի (այսուհետ՝ դիմումատուի) համար:

10. Այն դեպքում, երբ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելու ժամանակ դրա վանդակներում տեղեկություններ նշելու համար

բավարար տեղ չկա, այդպիսի տեղեկությունները նշվում են դիմումի հակառակ երեսին կամ դիմումին լրացուցիչ կցվող A4 ձեւաչափի թերթերի վրա, որոնք թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի անբաժանելի մասն են կազմում (այսուհետ՝ լրացում):

Ընդ որում, դիմումի համապատասխան վանդակում կատարվում է «Տե՛ս հակառակ կողմը» կամ «Տե՛ս լրացումը» գրառումը: Լրացման բոլոր թերթերը պետք է համարակալված լինեն:

Լրացման յուրաքանչյուր թերթի վերեւի աջ անկյունում կատարվում է «Թիվ _____ դիմումի լրացում _____թ. վրա»:

Հավելվածի յուրաքանչյուր թերթ ստորին աջ անկյունում ստորագրվում է դիմումը ներկայացրած անձի կողմից եւ հաստատվում է դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ դիմումատուն կամ մաքսային ներկայացուցիչն ունի կնիք:

11. 1-19-րդ վանդակները լրացվում են դիմումատուի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս 7-10-րդ եւ 18-րդ վանդակները լրացվում են դիմումատուի ցանկությամբ, եթե Օրենսգրքի 120-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներկայացվող փաստաթղթերի մեջ պարունակվում են անհրաժեշտ տեղեկությունները:

Բելառուսի Հանրապետությունում դիմումի 7-10-րդ եւ 18-րդ վանդակները լրացվում են պարտադիր կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի 18-րդ եւ 19-րդ վանդակները լրացվում են հաջորդաբար. սկզբում՝ ապրանքների մասին բոլոր տեղեկությունները, իսկ հետո՝ փաստաթղթերի մասին տեղեկությունները:

12. «A», «C» եւ «D» վանդակները լրացվում են մաքսային մարմնի կողմից:

13. Դիմումը լրացվում է փոքրատառերով՝ տպիչ սարքերի օգտագործմամբ:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը տպվում է ընթեռնելի ձեւով եւ չպետք է պարունակի ջնջումներ, ուղղումներ եւ շտկումներ:

Եթե փաստաթղթերի մեջ հանդիպում են լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ օտարերկրյա անձանց, ապրանքների, տրանսպորտային միջոցների անվանումներ եւ այլն, ապա դիմումի մեջ այդպիսի տեղեկությունները նշվում են լատինական այբուբենի տառերով:

14. Դիմումատուի (ապրանքների) բնակության վայրը կամ գտնվելու վայրը նշելիս տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի համապատասխան վանդակում՝ ստորակետով անջատված, եւ ներառում են՝

1) երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2) վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն) (Ղրղզստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկություններ նշելիս՝ վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նիշերի համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՄԴ)).

3) բնակավայրը.

4) փողոցը (բուլվար, պողոտա եւ այլն).

5) շենքի համարը.

6) մասնաշենքի (շինության) համարը.

7) բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը:

15. Անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկություններ նշելիս տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի համապատասխան վանդակում՝ ստորակետով անջատված, եւ ներառում են՝

1) այն երկրի ծածկագիրը, որի լիազորված մարմնի կողմից տրվել է անձը հաստատող փաստաթուղթը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2) փաստաթղթի անվանումը (Ռուսաստանի Դաշնության համար).

3) փաստաթղթի սերիան (առկայության դեպքում) եւ համարը (միջակայքով).

4) փաստաթղթի տրամադրման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

16. Եթե սույն կարգին համապատասխան պահանջվում է հարկային համարի վերաբերյալ տեղեկությունների նշումը, ապա տվյալ տեղեկություններ ասելով հասկանում ենք՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ) (բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի) կամ ֆիզիկական անձի նույնականացման համարը (առկայության դեպքում).

Ղազախստանի Հանրապետությունում՝ բիզնես-նույնականացման համարը (ԲՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի,

այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար.

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ)՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ Ղրղզստանի Հանրապետության տարածքում առեւտրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձի համար.

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ), իսկ իրավաբանական անձի համար՝ նաեւ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ) (իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման համար տրվում է ՀԿՊԾ, որը տրվել է ըստ առանձնացված ստորաբաժանման վայրի), որը նշվում է էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «/» նշանով:

17. Ստացողի, ուղարկողի եւ այն անձի վերաբերյալ տեղեկությունները, որը հանդես է գալու որպես ապրանքների հայտարարատու, նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի համապատասխան վանդակների առանձին տողերում եւ ներառում են՝

1) իրավաբանական անձի (կազմակերպության) համար՝

կրճատ (կրճատված) կամ լրիվ անվանումը.

հարկային համարը (սույն կարգի 16-րդ կետին համապատասխան).

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան).

2) կազմակերպություն հանդիսացող օտարերկրյա անձի համար՝

կրճատ (կրճատված) կամ լրիվ անվանումը.

գտնվելու վայրը (սույն կարգի 14-րդ կետին համապատասխան).

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան).

3) իրավաբանական անձի (կազմակերպության) անունից հանդես եկող՝ իրավաբանական անձ չհանդիսացող առանձնացված ստորաբաժանման համար՝

այն իրավաբանական անձի (կազմակերպության) կրճատ (կրճատված) անվանումը, որի կառուցվածքային ստորաբաժանումն է այն.

այն իրավաբանական անձի (կազմակերպության) հարկային համարը, որի կառուցվածքային ստորաբաժանումն է այն (սույն կարգի 16-րդ կետին համապատասխան).

այն իրավաբանական անձի (կազմակերպության) գտնվելու վայրը, որի կառուցվածքային ստորաբաժանումն է այն (սույն կարգի 14-րդ կետին համապատասխան) (չի նշվում Բելառուսի Հանրապետությունում).

առանձնացված ստորաբաժանման կրճատ (կրճատված) կամ լրիվ անվանումը (անվանման առկայության դեպքում).

առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրը (սույն կարգի 14-րդ կետին համապատասխան).

առանձնացված ստորաբաժանման հարկային համարը (սույն կարգի 16-րդ կետին համապատասխան).

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան).

4) որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բնակության վայրը՝ սույն կարգի 14-րդ կետին համապատասխան.

հարկային համարը (սույն կարգի 16-րդ կետին համապատասխան).

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան).

5) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բնակության վայրը (սույն կարգի 14-րդ կետին համապատասխան).

հարկային համարը (բացառությամբ օտարերկրյա անձի) (սույն կարգի 16-րդ կետին համապատասխան).

անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (սույն կարգի 15-րդ կետին համապատասխան).

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան).

նույնականացման համարը (առկայության դեպքում) (Բելառուսի Հանրապետության համար):

18. Անձի կոնտակտային վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի համապատասխան վանդակում՝ մեկ տողով, միջակայքով եւ ներառում են՝

կապի տեսակի անվանումը (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ եւ այլն).

կապուղու նույնականացուցիչը (հեռախոսի, ֆաքսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն եւ այլն):

II. Դիմումի վանդակները լրացնելու կարգը

19. 1-ին վանդակը՝ «Դիմումը», լրացվում է հետեւյալ կարգով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս վանդակում նշվում է «ԷՓ» հապավումը: Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս վանդակը չի լրացվում:

20. 2-րդ վանդակը՝ «Դիմումատուն», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են այն անձի վերաբերյալ տեղեկությունները, որը հանդես է գալու որպես ապրանքների հայտարարատու՝ սույն կարգի 17-րդ կետին համապատասխան:

Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու վերաբերյալ վկայականի համարը, եթե դիմումատուն լիազորված տնտեսական օպերատոր է: Մնացած դեպքերում ենթաբաժինը չի լրացվում:

Վանդակի «b» ենթաբաժնում «մինչեւ _____ պարտավորվում է ներկայացնել ԱՀ» տողում նշվում է մաքսային մարմին ԱՀ ներկայացնելու ժամկետը լրանալու ամսաթիվը՝ օօ/աա/տտ ձեւաչափով (այստեղ եվ այսուհետ՝ օրացուցային տարվա օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը)՝ Օրենսգրքի 120-րդ եւ 441-րդ հոդվածներին համապատասխան:

21. 3-րդ վանդակը՝ «Թերթերի քանակը», լրացվում է հետեւյալ կարգով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս վանդակը չի լրացվում: Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս վանդակում նշվում է դիմումի թերթերի ընդհանուր քանակը, ներառյալ՝ առաջին եւ բոլոր հաջորդող թերթերը:

22. 4-րդ վանդակը՝ «Ընթացակարգը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ծածկագիրը, որը ձեւավորվում է ըստ հետեւյալ սխեմայի.

$\frac{XX}{1}\frac{XX}{2}$,

որտեղ՝

1-ին տարրը՝ հայտագրվող մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան.

2-րդ տարրը՝ նախորդող մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան, եթե ապրանքները նախկինում ձեւակերպվել են այլ մաքսային ընթացակարգով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի: Եթե ապրանքները նախկինում այլ մաքսային ընթացակարգով չեն ձեւակերպվել, նշվում է երկու զրո՝ «00»:

23. 5-րդ վանդակը՝ «Ընդամենն ապրանքներ», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում թվերով նշվում է հայտագրված ապրանքների ընդհանուր քանակը:

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում հայտագրվող ապրանքների ընդհանուր քանակը պետք է համապատասխանի դիմումի 18-րդ վանդակում նշված կամ Օրենսգրքի 120-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներկայացվող ապրանքների անվանումների ընդհանուր քանակին (եթե ապրանքների վերաբերյալ տեղեկությունները ենթակա չեն նշման դիմումի 18-րդ վանդակում՝ սույն կարգի 36-րդ կետին համապատասխան):

Բելառուսի Հանրապետությունում հայտագրվող ապրանքների ընդհանուր քանակը պետք է համապատասխանի դիմումի 18-րդ վանդակում նշված ապրանքների անվանումների ընդհանուր քանակին:

24. 6-րդ վանդակը՝ «Ապրանքների կատեգորիան», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ապրանքների կատեգորիաների դասակարգչին համապատասխան այն ապրանքների կատեգորիայի ծածկագիրը, որոնք կարող են հայտագրվել ապրանքների բացթողման համար՝ մինչեւ ԱՀ ներկայացնելը:

25. 7-րդ վանդակը՝ «Ուղարկողը», լրացվում է հետեւյալ կարգով:

Սույն կարգի 17-րդ կետին համապատասխան՝ վանդակում նշվում են տեղեկություններ տրանսպորտային (փոխադրման) այնպիսի փաստաթղթերում որպես ուղարկող նշված անձի վերաբերյալ, որոնց համապատասխան սկսվել է ապրանքների փոխադրումը:

26. 8-րդ վանդակը՝ «Ստացողը», լրացվում է հետեւյալ կարգով:

Սույն կարգի 17-րդ կետին համապատասխան՝ վանդակում նշվում են տեղեկություններ տրանսպորտային (փոխադրման) այնպիսի փաստաթղթերում որպես ստացող նշված անձի վերաբերյալ, որոնց համապատասխան ավարտվել է ապրանքների փոխադրումը:

Եթե սույն վանդակում նշման ենթակա տեղեկություններում կրկնվում են դիմումի 2-րդ վանդակում նշման ենթակա տեղեկությունները (առանց հաշվի առնելու 2-րդ վանդակի ենթաբաժիններում նշված տեղեկությունները), ապա տվյալ տեղեկությունները սույն վանդակում չեն ներառվում: Այս դեպքում էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ նշվում է տեղեկությունների համընկնումների հատկանիշը, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ կատարվում է «Տե՛ս դիմումի 2-րդ վանդակը» գրառումը:

27. 9-րդ վանդակը՝ «Ուղարկող երկիրը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ուղարկող երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան: Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս կարող է նշվել ուղարկող երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

Եթե միջազգային փոխադրումն իրականացվել է մի քանի տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերով, ապա վանդակում նշվում է առաջին երկրի կրճատ անվանումը, որում ապրանքներն ընդունվել են փոխադրման՝ դիմումի 8-րդ վանդակում նշված ստացողի հասցեին առաքելու համար:

28. 10-րդ վանդակը՝ «Նշանակման երկիրը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է նշանակման երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան: Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս կարող է նշվել նշանակման երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

29. 11-րդ վանդակը՝ «Նախորդող փաստաթուղթը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան, եւ ԱՀ-ի գրանցման համարը, որը տրվել է ապրանքին դիմումը ներկայացնելուց առաջ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու ժամանակ (բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի), այն դեպքում, երբ մինչեւ դիմումը ներկայացնելն ապրանքները ձեւակերպվել են մաքսային ընթացակարգով (բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի):

Վանդակում նշվում է փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան, եւ տարանցման հայտարարագրի գրանցման համարն այն դեպքում, երբ ապրանքները մինչեւ դիմումը ներկայացնելը ձեւակերպվել են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, ինչպես նաեւ այն դեպքում, երբ որպես տարանցման հայտարարագիր դիմումատուի կողմից ներկայացվում են տրանսպորտային (փոխադրման), առեւտրային եւ (կամ) այլ փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան՝ վանդակում նշվում են նախնական տեղեկատվության ծածկագիրը եւ մինչեւ ԱՀ ներկայացնելը բացթողման համար հայտագրված ապրանքների վերաբերյալ տրամադրված նախնական տեղեկատվության գրանցման համարը, Ռուսաստանի Դաշնությունում՝ Միության մաքսային տարածք ժամանելու վերաբերյալ ծանուցման ծածկագիրը եւ այդպիսի ծանուցման գրանցման համարն այն դեպքում, երբ ապրանքները մինչ այդ չեն ձեւակերպվել մաքսային ընթացակարգով, այդ թվում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

Տվյալ տեղեկությունները ենթակա են նշման էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «-» գծիկի նշանով:

Վանդակը չի լրացվում, եթե ապրանքները մաքսային ընթացակարգով չեն ձեւակերպվել, եւ Օրենսգրքով եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտերով ապրանքների մասով սահմանված չէ նախնական տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունը:

30. 12-րդ վանդակը՝ «Ընդհանուր համաքաշը (բրուտտո) (կգ)», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է որպես դիմումի 18-րդ վանդակի 6-րդ սյունակում նշված ապրանքների քաշերի գումար հաշվարկված այն ապրանքների ընդհանուր զանգվածի համաքաշը (բրուտտո) (կգ), որոնց վերաբերյալ ներկայացվում է դիմումը:

31. 13-րդ վանդակը՝ «Ընդհանուր արժեքը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում թվերով նշվում է ապրանքների ընդհանուր արժեքը, որը ստացվել է որպես դիմումի 18-րդ վանդակի 7-րդ սյունակում նշված արժեքների գումար, այն արժույթով, որի ծածկագիրը նշված է դիմումի 14-րդ վանդակում:

Ապրանքների ընդհանուր արժեքի ստացված արժեքը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ 2 նիշ ճշտությամբ:

Կանխիկ արժույթի հայտարարագրման դեպքում վանդակում նշվում է փոխադրվող արժույթի գումարը:

32. 14-րդ վանդակը՝ «Արժույթը», լրացվում է հետեւյալ կարգով:

Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար վանդակում նշվում է պայմանագրի գնի արժույթի ծածկագիրը, իսկ Բելառուսի Հանրապետության համար՝ վճարման (գնահատման) արժույթի տառային ծածկագիրը, որում սահմանված է հայտագրված ապրանքների արժեքը՝ արժույթների դասակարգչին համապատասխան:

Եթե պայմանագրի (գործարքի) պայմաններով նախատեսված է գնի ավելի քան մեկ արժույթ (վճարման (գնահատման) արժույթ), ապա գնի արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու ժամանակ նշվում է գնի գերակայող արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) ծածկագիրը:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս թույլատրվում է արժույթի լրիվ անվանման նշումը՝ արժույթի դասակարգչին համապատասխան:

33. 15-րդ վանդակը՝ «Վճարման պարտավորության կատարման ապահովումը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են մաքսային տուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման տրամադրված ապահովման վերաբերյալ տեղեկությունները՝

ապահովման եղանակի ծածկագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու եղանակների դասակարգչին համապատասխան.

ապահովման չափը.

այն արժույթի ծածկագիրը, որով սահմանված է ապահովման չափը՝ արժույթների դասակարգչին համապատասխան.

ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթի համարը (առկայության դեպքում).

ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթի ամսաթիվը եւ գործողության ժամկետը (առկայության դեպքում):

Տվյալ տեղեկությունները ենթակա են նշման էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «-» գծիկի նշանով:

Վանդակը չի լրացվում, եթե դիմումատուն լիազորված տնտեսական օպերատոր է, ինչպես նաեւ Օրենսգրքով կամ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում, երբ տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային տուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում:

Հայաստանի Հանրապետությունում տվյալ վանդակը չի լրացվում, եթե դիմումի հետ ներկայացված են մաքսային տուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարումը հաստատող փաստաթղթեր (բանկային երաշխիք, վճարման հանձնարարական, երաշխավորության պայմանագիր եւ այլն):

Հայաստանի Հանրապետությունում թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս տվյալ վանդակում նշվում է ապահովման եղանակի ծածկագիրը եւ արժույթի տառային ծածկագիրը:

34. 16-րդ վանդակը՝ «Ապրանքների գտնվելու վայրը», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են տեղեկություններ այն վայրի մասին, որտեղ ապրանքները գտնվում են դիմումը ներկայացնելու պահին (էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ առանձին տողերում)՝

ապրանքների գտնվելու վայրի ծածկագիրը՝ ապրանքների գտնվելու վայրերի դասակարգչին համապատասխան.

այն մաքսային մարմնի ծածկագիրը, որի գործունեության տարածքում է գտնվում ապրանքների գտնվելու նշված վայրը՝ անդամ պետություններում կիրառվող մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան.

սույն կարգի 14-րդ կետին համապատասխան ապրանքների գտնվելու վայրը կամ երկաթուղային կայարանի անվանումը (եթե ապրանքները գտնվում են երկաթուղային կայարանի (մերձատար ուղիների) տարածքում), կամ ծովային (գետային) նավահանգստի անվանումը (եթե ապրանքները գտնվում են ծովային (գետային) նավահանգստի տարածքում), կամ օդային անցակետի անվանումը (եթե ապրանքները գտնվում են օդային անցակետի տարածքում), կամ մաքսային հսկողության գոտու համարը (մաքսային հսկողության գոտու գրանցման համարը) (եթե անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ անցկացվում է մաքսային տարածքների գոտիների հաշվառում): Ընդ որում, սույն կետի վեցերորդ պարբերությամբ նախատեսված տեղեկությունները վանդակում չեն նշվում.

ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում, երկրորդ կամ երրորդ տիպի լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ներառված լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում ներառելու վերաբերյալ վկայականի համարը, եթե ապրանքները գտնվում են

ժամանակավոր պահպանման պահեստում, շինություններում, բաց հարթակներում եւ լիազորված տնտեսական օպերատորի այլ տարածքներում.

Ղազախստանի Հանրապետությունում՝ եթե ապրանքների ժամանակավոր պահպանման վայրն ավտոտրանսպորտային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցն է, ապա նշվում է տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը՝ տրանսպորտի եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների գրանցման համարները: Թղթային կրիչով դիմումի մեջ տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը տրանսպորտի եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան նշելուց հետո դրվում է միջակետ՝ «.», տրանսպորտային միջոցների գրանցման համարները նշվում են առանց միջակայքերի՝ իրարից առանձնացվելով ստորակետով՝ «,»:

Հայաստանի Հանրապետությունում վանդակը չի լրացվում:

35. 17-րդ վանդակը՝ «Դիմումը լրացրած անձի վերաբերյալ տեղեկությունները», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են դիմումը լրացրած անձի վերաբերյալ տեղեկությունները եւ դիմումի ձեւավորման ամսաթիվը:

Եթե դիմումատուի անունից մաքսային գործառնություններն իրականացվում են մաքսային ներկայացուցչի կողմից՝ նրա հանձնարարությամբ, ապա վանդակի ձախ ենթաբաժնում նշվում են՝

մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան մաքսային ներկայացուցիչների ռեեստրում անձին ներառելու մասին վկայականի ծածկագիրը կամ մաքսային ներկայացուցիչների ռեեստրում անձի գրանցման համարը.

մաքսային ներկայացուցիչների ռեեստրում անձին ներառելու մասին վկայականի համարը կամ մաքսային ներկայացուցիչների ռեեստրում անձի գրանցման համարը.

արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

մաքսային ներկայացուցչի եւ դիմումատուի միջեւ կնքված պայմանագրի համարը.

մաքսային ներկայացուցչի եւ դիմումատուի միջեւ կնքված պայմանագրի ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով):

Տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ առանձին տողերում՝ 1-5-րդ համարների տակ:

Վանդակի ձախ ենթաբաժինը չի լրացվում, եթե դիմումը ներկայացվում է դիմումի 2-րդ վանդակում նշված դիմումատուի կողմից:

Վանդակի աջ ենթաբաժնում նշվում են դիմումը լրացրած ֆիզիկական անձի, ինչպես նաեւ տվյալ անձի լիազորությունները հավաստող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները՝ սույն կարգի 15-րդ կետին համապատասխան.

զբաղեցրած պաշտոնը՝ ըստ դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի հաստիքացուցակի.

կոնտակտային վավերապայմանները (սույն կարգի 18-րդ կետին համապատասխան) եւ այդ ֆիզիկական անձի կողմից ներկայացվող կազմակերպության էլեկտրոնային փոստի հասցեն.

դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի իրավասությունները հավաստող՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան փաստաթղթի ծածկագիրը, եթե դիմումը լրացված է դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի կողմից, կամ դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի անունից գործողություններ կատարելու լիազորագրի ծածկագիրը, եթե դիմումը լրացվում է դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի աշխատակցի կողմից.

դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի իրավասությունները հավաստող փաստաթղթի կամ դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի անունից գործողություններ կատարելու լիազորագրի համարը.

դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի իրավասությունները հավաստող փաստաթղթի ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով) կամ դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի անունից գործողություններ կատարելու լիազորագրի տրամադրման ամսաթիվը.

դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի անունից գործողություններ կատարելու լիազորագրի գործողության ժամկետը (օօ/աա/տտ ձեւաչափով)՝ այդպիսի ժամկետ սահմանված լինելու դեպքում:

Տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ առանձին տողերում (բացառությամբ սույն կետի տասնվեցերորդից տասնիններորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների, որոնք նշվում են միջակայքով):

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս վանդակի աջ ենթաբաժնում նշվող տեղեկությունների տակ դիմումը լրացրած անձը դնում է իր ստորագրությունը, դիմումի լրացման ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով) եւ դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատում է դիմումատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ դիմումատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք:

36. 18-րդ վանդակը՝ «Ապրանքների վերաբերյալ տեղեկությունները», լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են հետեւյալ տեղեկություններն այն ապրանքների վերաբերյալ, որոնց նկատմամբ ներկայացվում է դիմումը՝

1-ին սյունակում՝ ապրանքի համարը.

2-րդ սյունակում՝

ապրանքի անվանումը (առեւտրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում).

ապրանքի նկարագրությունը, որը թույլ է տալիս այն դասել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան մեկ ծածկագրին՝ առնվազն առաջին 6 նիշերի մակարդակով.

տեղեկություններ՝ ապրանքային նշանի, ինչպես նաեւ մտավոր սեփականության օբյեկտի վերաբերյալ (առկայության դեպքում). մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ պարունակող ապրանքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելիս, որոնք ընդգրկված են մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի մաքսային մարմին է ներկայացվում դիմումը.

ապրանքի ծագման տեղանվան անվանումը, եթե այն մտավոր սեփականության այնպիսի օբյեկտ է, որն ընդգրկված է մտավոր սեփականության

օբյեկտների մաքսային ռեեստրում, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի մաքսային մարմին է ներկայացվում դիմումը:

Տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ առանձին տողերում.

3-րդ սյունակում՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան ապրանքի դասակարգչային ծածկագիրը՝ առնվազն առաջին 6 նիշերի մակարդակով (նշվում է առանց միջակայքերի).

4-րդ սյունակում՝ ապրանքի քանակը՝ 5-րդ սյունակում նշված լրացուցիչ չափման միավորով, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան հայտարարագրվող ապրանքի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ չափման միավոր.

5-րդ սյունակում՝

լրացուցիչ չափման միավորի պայմանական նշումը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան.

լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան:

Տվյալ տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «/» նշանով:

6-րդ սյունակում՝ ապրանքի համաքաշը (բրուտտո) (կգ): «Համաքաշ» ասելով հասկանում ենք ապրանքի զանգվածը, ներառյալ՝ մինչեւ շրջանառության մեջ դրվելը դրա անփոփոխ վիճակն ապահովելու համար անհրաժեշտ փաթեթավորման բոլոր տեսակները՝ բացառությամբ բեռնարկղերի եւ այլ տրանսպորտային սարքավորումների:

Նշվող արժեքը կլորացվում է ըստ մաթեմատիկական կանոնների՝ ստորակետից հետո մինչեւ 3 նիշ ճշտությամբ, իսկ այն դեպքում, երբ ապրանքի ընդհանուր զանգվածը կազմում է 1 գրամից պակաս՝ ստորակետից հետո մինչեւ 6 նիշ ճշտությամբ.

7-րդ սյունակում՝ ապրանքի արժեքը թվերով՝ առեւտրային փաստաթղթերին համապատասխան, եւ այն արժույթով, որի ծածկագիրը նշված է դիմումի 14-րդ վանդակի մեջ:

Ապրանքի արժեքի ստացված արժեքը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ 2 նիշ ճշտությամբ:

Կանխիկ արժույթի հայտագրման դեպքում նշվում է փոխադրվող արժույթի գումարը.

8-րդ սյունակում՝ ապրանքի ծագման երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան այն դեպքում, երբ հայտագրվող ապրանքի նկատմամբ անդամ պետություններից մեկի կողմից միակողմանի կարգով սահմանված են ներմուծման սահմանափակումներ՝ կախված ապրանքի ծագումից, իսկ Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում նաեւ այն դեպքում, երբ ապրանքի ծագման վերաբերյալ տեղեկություններն ազդում են արգելքների ու սահմանափակումների պահպանման վրա:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս՝

եթե ապրանքի վրա կատարված մակնշման կամ առեւտրային, տրանսպորտային (փոխադրման) եւ այլ փաստաթղթերի մեջ չի մատնանշվում ապրանքների ծագման կոնկրետ երկիրը, այլ ներառված են տեղեկություններ՝ Եվրոպական միության տարածքից ապրանքի ծագման վերաբերյալ, ապա լատինական տառերով նշվում է «EU» երկնիշ ծածկագիրը.

եթե ապրանքի ծագումն անհայտ է, ապա ծածկագրի փոխարեն նշվում է երկու զրո՝ «00»:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումը լրացնելիս՝

սյունակում կարող է նշվել հայտագրվող ապրանքի ծագման երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան,

եթե ապրանքի վրա կատարված մակնշման կամ փաստաթղթերի մեջ չի մատնանշվում ապրանքների ծագման կոնկրետ երկիրը, այլ ներառված են տեղեկություններ՝ Եվրոպական միության տարածքից ապրանքի ծագման վերաբերյալ, ապա վանդակում մեծատառերով կատարվում է «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ» գրառումը.

եթե ապրանքի ծագումն անհայտ է, ապա սյունակում մեծատառերով կատարվում է «ԱՆՀԱՅՏ Է» գրառումը:

37. 19-րդ վանդակը՝ «Ապրանքների վերաբերյալ փաստաթղթերը», լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են Օրենսգրքի 120-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան դիմումի հետ մեկտեղ դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները (ընդ որում, փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները ենթակա են վանդակում նշման՝ անկախ այն բանից, թե արդյոք Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա փաստաթուղթը փաստացի ներկայացվում է դիմումի հետ մեկտեղ, թե չի ներկայացվում)՝

1-ին սյունակում՝ փաստաթղթի հերթական համարը.

2-րդ սյունակում՝ փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

3-րդ սյունակում՝ այն հատկանիշը, որով հաստատվում է դիմումը ներկայացնելու ժամանակ փաստաթուղթը ներկայացնելու կամ չներկայացնելու փաստը.

«1»՝ փաստաթուղթը ներկայացված է.

«2»՝ փաստաթուղթը ներկայացված չէ (ավելի վաղ ներկայացվել է մաքսային մարմին). այս դեպքում հատկանիշից հետո նշվում է այն մաքսային փաստաթղթի գրանցման համարը, որին կցվել է այդ փաստաթուղթը, էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «/» նշանով.

«3»՝ փաստաթուղթը ներկայացված չէ (կներկայացվի մինչեւ ապրանքների բացթողումը (ապրանքների ծագման, արգելքների եւ սահմանափակումների պահպանման վերաբերյալ տեղեկությունները հաստատող փաստաթղթերի համար), ապրանքների բացթողումից հետո (երբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան արգելքների ու սահմանափակումների պահպանումը կարող է հաստատվել ապրանքները բացթողելուց հետո)): Այս դեպքում հատկանիշից հետո նշվում է այն ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով), մինչեւ որը պետք է կատարվեն փաստաթուղթը ներկայցնելու պարտավորությունները, էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ իրարից առանձնացվելով «/» նշանով.

«4»՝ փաստաթուղթը ներկայացված չէ՝ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան (կարող է ստացվել մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերից) (մաքսային մարմնի կողմից տրամադրվող փաստաթղթերի համար).

«5»՝ փաստաթուղթը ներկայացված չէ՝ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան (կարող է ստացվել պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից) անդամ

պետությունների մաքսային մարմինների եւ պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում.

4-րդ, 5-րդ եւ 6-րդ սյունակներում համապատասխանաբար՝ փաստաթղթի անվանումը, ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով) եւ փաստաթղթի համարը: Եթե փաստաթղթում նշված չէ ամսաթիվ եւ (կամ) համար, ապա 5-րդ եւ 6-րդ սյունակներում դրվում է «-» նշանը.

7-րդ սյունակում՝ թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմումի մեջ՝ 18-րդ վանդակի 1-ին սյունակից այն ապրանքի համարը (ապրանքների համարները), որի վերաբերյալ տեղեկությունները հաստատվում է փաստաթուղթի մեջ: Ապրանքների հերթական համարները նշվում են ստորակետով անջատված: Ապրանքների անընդմեջ հաջորդող հերթական համարները նշվում են՝ դնելով համապատասխան տիրույթի առաջին եւ վերջին համարը՝ իրարից առանձնացվելով «-» գծիկի նշանով: Այն դեպքում, երբ փաստաթուղթը վերաբերում է բոլոր ապրանքներին, կատարվում է «Բոլոր ապրանքները» գրառումը:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմումի մեջ 7-րդ սյունակը չի լրացվում: Ապրանքների եւ ներկայացվող փաստաթղթերի միջեւ կապերը հաստատվում են դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմանների միջեւ ստորադաս կապեր հաստատելու միջոցով:

III. Մաքսային մարմնի կողմից դիմումի վանդակները լրացնելու կարգը

38. «Ա» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակի ձախ ենթաբաժնում նշվում է դիմումի գրանցման համարը, որը ձեւավորված է ըստ հետեւյալ սխեմայի՝

$$\frac{X\ldots\ldots X}{1}/\frac{XXXXXX}{2}/\frac{3BXXXXXX}{3},$$

որտեղ՝

1-ին տարրը դիմումը գրանցած մաքսային մարմնի ծածկագիրն է՝ անդամ պետություններում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս նշվում է դիմումը գրանցած մաքսային մարմնի երկնիշ ծածկագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս նշվում է դիմումը գրանցած մաքսային մարմնի հնգանիշ ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում օգտագործվող մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնությունում ապրանքները հայտարարագրելիս նշվում է դիմումը գրանցած մաքսային մարմնի ութանիշ ծածկագիրը՝ Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան.

2-րդ տարրը՝ դիմումի գրանցման ամսաթիվը՝ ՕՕ/ԱԱ/ՏՏ ձեւաչափով.

3-րդ տարրը դիմումը գրանցած մաքսային մարմնի կողմից ըստ դիմումների գրանցամատյանի տրվող՝ «ԴՄ» [ՅԲ] տառային սիմվոլներով սկսվող դիմումի հերթական համարն է (յուրաքանչյուր օրացուցային տարի համարակալումը սկսվում է մեկից):

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով ներկայացվող դիմումի գրանցման համարի բոլոր տարրերը նշվում են՝ իրարից առանձնացվելով «/» նշանով, տարրերի միջեւ միջակայքեր չեն թույլատրվում:

Ներկայացումը եւ գրանցումն արձանագրելու, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ներկայացվող դիմումի գրանցման համարի վերաբերյալ տեղեկությունները ձեւավորվում են էլեկտրոնային եղանակով:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս դիմումի գրանցման համարը նույնպես դրվում է դիմումի երկրորդ թերթի վերեւի աջ անկյունում եւ լրացման յուրաքանչյուր էջում (առկայության դեպքում):

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս վանդակի աջ ենթաբաժնում նշվում են դիմումը ներկայացնելու եւ այն գրանցելու ամսաթիվն ու ժամը՝ տող առ տող (ամսաթիվը՝ օօ/աա/տտ ձեւաչափով եւ իրարից առանձնացնելով «/» նշանով, ժամը՝ 24-ժամյա hh:mm ձեւաչափով (ժամերը եւ րոպեները՝ իրարից առանձնացնելով «:» նշանով)), որոնք հաստատվում են դիմումը գրանցած մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ՝ այդ պաշտոնատար անձի անձնական համարակալված կնիքի դրոշմվածք դնելու միջոցով:

39. «C» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են հայտագրված ապրանքների վերաբերյալ մաքսային մարմնի ընդունած որոշման վերաբերյալ տեղեկությունները (նշումները), ինչպես նաեւ այլ տեղեկություններ (նշումներ)՝ անցկացված մաքսային հսկողության արդյունքներով:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս տեղեկությունները (նշումները) նշվում են համարների տակ՝

1-ին համարի տակ՝ ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով), մինչեւ երբ երկարաձգվում է ապրանքների բացթողման ժամկետը, եթե Օրենսգրքի 119-րդ հոդվածին համապատասխան՝ կայացվել է որոշում՝ ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ դնելով մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը.

2-րդ համարի տակ՝ ապրանքների բացթողման կամ ապրանքների բացթողումը մերժելու ամսաթիվը (օօ/աա/տտ ձեւաչափով) եւ ժամը՝ իրարից առանձնացնելով «/» նշանով (24-ժամյա hh:mm ձեւաչափով), կամ ապրանքների բացթողման գրանցման համարը, եթե դրա նշումը նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ՝ կատարելով (դնելով) «Բացթողումը թույլատրված է» կամ «Բացթողումը մերժված է» համապատասխան գրառում կամ նշում (դրոշմակնիքի դրոշմվածքի ձեւով).

3-րդ համարի տակ՝ այլ նշումներ եւ տեղեկություններ (անհրաժեշտության դեպքում)՝ անցկացված մաքսային հսկողության արդյունքներով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս 2-րդ համարի տակ նշված տեղեկությունները (նշումները) ձեւավորվում են էլեկտրոնային փաստաթղթի ձեւով, իսկ մնացած տեղեկությունները՝ էլեկտրոնային եղանակով:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս ապրանքների բացթողման կամ ապրանքների բացթողումը մերժելու վերաբերյալ նշումը կատարվում է դիմումի բոլոր թերթերի վրա, մաքսային հսկողության արդյունքներով այլ նշումներ կատարվում են միայն դիմումի առաջին թերթի վրա: Նշումները հաստատվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ այդ պաշտոնատար անձի անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:

40. «D» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են դիմումատուի կողմից ներկայացված՝ մաքսային տուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման այն ապահովումն ընդունելու վերաբերյալ տեղեկությունները (նշումները), որի վերաբերյալ տեղեկությունները նշված են դիմումի 15-րդ վանդակում, ինչպես նաեւ մաքսային մարմնի պաշտոնատար անձի այլ տեղեկություններ (նշումներ)՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս տվյալ վանդակում նշման ենթակա տեղեկությունները (նշումները) ձեւավորվում են էլեկտրոնային եղանակով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 171 որոշմամբ

ԿԱՐԳ

մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու կամ գրանցումը մերժելու

1. Սույն կարգը մշակված է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 120-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան, եւ դրանով սահմանվում են մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու կանոնները (այսուհետ՝ դիմում):

2. Դիմումը ներկայացվում է այն անձի կողմից, որը հանդես կգա որպես ապրանքների հայտարարատու (այսուհետ՝ դիմումատու) Եվրասիական տնտեսական միության անդամ պետության այն մաքսային մարմին (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, մաքսային մարմին) ապրանքների հայտարարագիր ներկայացնելիս, որին հետագայում ներկայացվելու է ապրանքների հայտարարագիրը, եւ որն իրավասու է գրանցելու մաքսային հայտարարագրերը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Դիմումը կարող է ներկայացվել մաքսային ներկայացուցչի կողմից՝ դիմումատուի անունից եւ նրա հանձնարարությամբ:

3. Դիմումի ներկայացնելը, գրանցելը կամ գրանցումը մերժելն արձանագրվում են դիմումների գրանցամատյանում՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ (ներմուծվում են մաքսային մարմնի տեղեկատվական ռեսուրս):

Դիմումների գրանցամատյանները վարելու ձեւը եւ կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

4. Դիմումը ներկայացնելու ամսաթիվը եւ ժամն արձանագրվում են մաքսային մարմնի կողմից՝ տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

Էլեկտրոնային փաստաթղթերի ձեւով դիմում ներկայացնելիս մաքսային մարմինը տեղեկացնում է դիմումատուին էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու ամսաթվի եւ ժամի մասին:

Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս մաքսային մարմինը դիմումի «Ա» վանդակի աջ ենթաբաժնում դնում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը՝ օօ/աա/տտ ձեւաչափով (օրը, ամիսը, օրացուցային տարվա վերջին երկու թվերը), եւ ժամը՝ հհ:mm ձեւաչափով՝ իրարից առանձնացնելով «/» նշանով(ժամերը եւ րոպեները՝ իրարից առանձնացնելով «:» նշանով):

5. Դիմումը ներկայացնելիս մաքսային մարմինն ստուգում է Օրենսգրքի 120-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված՝ դիմումի գրանցումը մերժելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Նշված ստուգումն անցկացնելուց հետո մաքսային մարմինը գրանցում է դիմումը կամ մերժում է դիմումի գրանցումը ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելու պահից մաքսային մարմնի 1 աշխատանքային ժամվա ընթացքում:

Այն դեպքում, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի ձեւով, եւ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ մուտքագրվելու պահի դրությամբ մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին մնացել է մեկ ժամից պակաս, այդ դիմումը գրանցելը կամ գրանցումը մերժելն իրականացվում է

հաջորդ աշխատանքային օրը՝ ոչ ուշ, քան այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամն սկսելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

6. Դիմումի գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում մաքսային մարմինը գրանցում է դիմումը մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ գրանցման համար շնորհելու եղանակով, որը ձեւավորվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 171 որոշմամբ հաստատված՝ Մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը լրացնելու կարգով սահմանված կարգով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ներկայացված դիմումի գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում մաքսային մարմինն էլեկտրոնային եղանակով դիմումատուին տեղեկացնում է այն գրանցելու, ինչպես նաեւ տրված գրանցման համարի, այն տրամադրելու ամսաթվի եւ ժամի վերաբերյալ:

7. Դիմումի գրանցումը մերժելու հիմքերի առկայության դեպքում մաքսային մարմինը ձեւակերպում է դիմումի գրանցման մերժումը՝ նշելով պատճառները, դիմումի գրանցումը մերժելու ամսաթիվը եւ ժամը:

Էլեկտրոնային փաստաթղթի ձեւով դիմում ներկայացնելիս մաքսային մարմինը ձեւակերպում է դրա գրանցման մերժումը տեղեկատվական համակարգի օգտագործմամբ եւ էլեկտրոնային եղանակով այն ուղարկում է դիմումատուին:

Այն դեպքում, երբ դիմումը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով, մաքսային մարմնի պաշտոնատար անձը ձեւակերպում է դրա գրանցման մերժումը դիմումի հիմնական թերթի հակառակ երեսին եւ այն հաստատում է անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:

8. Այն դեպքում, երբ դիմումի գրանցման մերժումը դիմումատուին ուղարկվում է էլեկտրոնային փաստաթղթի ձեւով, այն ստանալու ամսաթիվը եւ ժամն արձանագրվում են դիմումատուի տեղեկատվական համակարգի

օգտագործմամբ: Դիմումատուն նշված ամսաթվի եւ ժամի վերաբերյալ մաքսային մարմնին տեղեկացնում է էլեկտրոնային եղանակով:

9. Թղթային կրիչով փաստաթղթի ձեւով ներկայացված դիմումի գրանցումը մերժելու դեպքում դիմումի մեկ օրինակը մնում է մաքսային մարմնում, երկրորդը վերադարձվում է դիմումատուին:

Այդ դեպքում դիմումատուն դնում է ստացման ամսաթիվը եւ ժամը (ժամերը եւ րոպեները) այն օրինակի վրա, որը մնում է մաքսային մարմնում՝ նշելով ամսաթիվը եւ անվան սկզբնատառերը, եւ այդ գրառումը հաստատում է իր ստորագրությամբ: